



ՎԱՐԾԻՔՆԵՐ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Սարմնական հաղթ զանգված մը, դեպի ետև շրջած քիչ մը. հեացող ու դժգոհ լանջ մը, որուն վրա վաղահաս ալեորումով ճերմըկած՝ առյուծի գլուխ մը ու զվարթ դեմք մը կխրոխտան. սրտաթունդ ու անուշ ձայն մը, որուն հայտնի անկեղծութեան շեշտը՝ շիտակ սրտիդ կերթա ու կտիրե անոր. ձեռքի բուն շարժումներ, որոնք սպառնալից պիտի թվեին, եթե դադարեին շնորհալի ըլլալի և որոնք՝ խոսակցութեան մեջ բանիվ բերանո շգրուցված մասերը ամբողջացնելու պաշտոնը կկատարեն:

Այս է արտաքին երևույթը:

Հին ատենները ապարանքներուն բոլոր արվեստական շքեղութիւնը ներսն էր. հիմակվան ճարտարապետութիւնը՝ շենքի դուրսի երեսին վրա կթափե իր բոլոր ճիգը, իր արվեստը, իր ճաշակը հոն ի տես կղնե ու փուլթ շրներ, որ ներսի պատերը անշնորհ կամ անպաճույճ երևան. հո՛ս հանգած է քաղաքակրթութեան հարատև ձգտումը. ամեն ինչ դուրսը: Գերաշնորհ Օրմանյան՝ հին ժամանակի ապարանքներն է. իր ներսը հմտութեան զանձեր կան լեցված և հոն կառուցված կահավորված ապարանք մը կա սրտի ու մտքի ամեն ճոխութիւններով, որոնք իր եկեղեցականի համեստ սքեմին տակ կծածկվին միշտ:

... Այն պարտասուն հոգիներուն մեջ, որով մեծ մասամբ մեր եկեղեցականութիւնը կձևանա, գերաշնորհ Օրմանյան կաղնիի մը ամբարձիկ ուղղութիւնը պահած է, անխախտ ու ամուր կերպով իր սրբազան կոչումին վրա, առանց պարծենալու՝ շարունակելով հատուցանել իր պարտքը, պարզութեամբ ու համեստութեամբ. այնպե՛ս ինչպե՛ս պարտքերը պետք է որ հատուցվին:

Այսպես, սիրահոժար գացած է հոն, ուր կոչած են զինքը Ազգն ու Եկեղեցին, Կարինի լեռնադաշտն մինչև Արմաշի մենաստանը. ճշմարիտ վարդապետ մը ըլլալով ո՛չ միայն այն սուրբ օծումով, զոր եկեղեցին կշնորհե,

այլ այն ավելի սուրբ օծումովը, զոր անձնվիրութիւնը կուտա:

Իր համակերպիկ մարդու զվարթախոհութիւնը՝ կյանքի պայմաններուն ճշմարիտ և ուղիղ ըմբռնումն է: Գերաշնորհ Օրմանյան գիտե, որ ամեն ճամբաները հարթ ու շիտակ չեն կրնար ըլլալ աշխարհիս վրա և զստիվարներ կան, ուրկե կրնա գլտորիլ մարդը այց գիտե նաև, որ ամեն զստիվար, միանգամայն զստիվար մըն է. վար կսահիս, բայց վեր ալ կելլես. և միթե մարդկային ճակատագիրը այս անգուլ երեւէջն շինված չէ՞:

Կրոնքը ասիկա ուսուցած է իրեն, խաչելութեան քով հարութիւնը նշմարած է միշտ ու վաշրկյան մը սրտաբեկ չէ եղած:

(ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊ, «Մանոք դեմեք»)

Օրմանյան սրբազան պատրիարք ըլլալի առաջ, մեր ամենեն գնահատելի և ազգասեր եկեղեցականներն մեկն էր. գնահատութիւն մը՝ որ նոր չեմ ընել, այլ 14 տարի առաջ ըրած եմ իմ «Մանոթ դեմքեր»-ու շարքին մեջ՝ իրեն հատկացված հոդվածով մը: Այդ հոդվածին մեջ՝ խիստ զբաքննութեան մը աշքն գրեթե փախցնելով ժողովուրդին հասկցնելու համար այս եկեղեցականին հեղափոխական ոգին, ըսած էի. «Օրմանյան սրբազան մեր եպիսկոպոսներուն երիտասարդը և մեր երիտասարդներուն եպիսկոպոսն է»: Ահա՛ այս էր այդ թվականին իմ համոզումս, որ բոլոր երիտասարդութեան այ համոզումն էր, Արդյոք այսպիսի կարծիք մը հայտնելով սխալած էի. ո՛չ: Օրմանյան սրբազան իբրև Սովետից հանձնաժողովի քարտուղար և Արմաշի վանահայր, իրավամբ ամենուն համակրութիւնը և վստահութիւնը շահած էր. իսկ իբրև Կարնո առաջնորդ՝ հեղափոխական գործունեութիւն մը ունեցավ: Անուրանալի է, որ Կարնո մեջ առաջին ցընցումը իր օրովը եղավ, ու շարժման գլուխը ինք գտնվեցավ: Այդ պատճառով ալ Օրմանյան սրբազան Պոլիս բերվեցավ և հարցաքննութեան ենթարկվելի հետո հաղիվ կրցավ իր օձիքը ազատել:



... Անցյալ շաբաթ օրվան և այս օրվան նիստերուն մեր առջև պարզված տեսարանները ուշագրավ կգտնեմ: Ես պետք չունեի ասոր համոզվելու համար, թե մարդ որքան տկար արարած մըն է, երբ կհարկադրվի ուրիշ մը դատելու: Մեկ վայրկյանի համար գոնե պետք էր, որ մերկանար իր կանխակալ կարծիքները, իր համակրությունները և հակակրությունները, որպեսզի արդար վճիռ մը արտասանելու կարող ըլլար: Պատմությունը երբ օր մը քննեմ մեր այսօրվան նիստը, Օրմանյան սրբազանի հակառակորդները և ջատագույնները պիտի գտնեմ, բայց դատավորներ չպիտի գտնեմ այստեղ: Արդարությունը անջատ ամեն անձն ու ամեն խնդրի՝ պետք է, որ բարձր ու սրբազան ըլլար: Ես շուրջս հուզվումք ու զայրույթ կտանեմ միայն: Այս դատավարությունը ընկելով, 12 տարվան կսկիծներու վերլուծումն է որ կկատարենք: Գյուրավ կհասկցվի, թե այդ ցավերու վերջուշումը կրքերու բորբոքում հառաջ բերավ: Միայն թե մոռնալու չէ՛, որ հոս քաղաքական խնդիր մը քննելու համար ժողովված շինք, այլ արդարություն ի գործ դնելու ամբաստանյալի մը գեմ. աղոր համար մոռնալու չէ, որ անցյալին վերաբերյալ այդ գործը իր ժամանակի պայմաններեն դատելու չենք, եթե արդար ըլլալ կուզենք: Ես իմ փորձառություններս, մարդկային արդարության վրա շատ նպաստավոր գաղափար չունիմ, վասնզի հաճախ տեսած եմ, որ մարդկային դատաստանները վայրկյանին տպավորությանը տակ կտրվին: Օրմանյան սրբազանին դատը Կոստանդնուպոլսո հայություն կյանքին մեկ ցուլացումն է, և դատավորներն ավելի պատմիչներու և ընկերաբաններու կվերաբերի:

... Հսկանքով, թե Օրմանյան սրբազան Սահմանադրության բոլոր տրամադրությունները չգործադրեց, ուստի այդ մասին իր բրած ուխտը դրժեց: Կհարցնեմ, թե այսօր, երբ հինգ տարին ի վեր մեր Սահմանադրությունը գործադրելու մասին կատարյալ պատուհան կվայելենք, արդոք անոր բոլոր տրամադրությունները գործադրեցինք: ... Մտածեցե՛ք անգամ մը, այսօր, երբ արդարությունը գործադրելու նպատակով հավաքված ենք այստեղ, արդոք արդարության գոնե տարրական և հիմնական պայմանները կհարգենք մենք: Առանց վարանելու դատելու վրա ենք ամբաստանյալ մը, որ բացակա է և որ իր ձայնը չի կրնար բարձրացնել մեր առջև ինքզինքը պաշտպանելու համար, նույնիսկ ամենեն բացահայտ կերպով անարդար պահանջումներու և նկատումներու հանդեպ:

... Իրեն վերագրված հանցանքներուն գրկազուրկ ըլլալով, ըսվեցավ, թե ստրկամիտ քաղաքականության կհետևեր Օրմանյան կատարության հանդեպ: Օրմանյան սրբազանը շարդերեն վեիջ հայոց պատրիարք եղավ, և համակերպություն քաղաքականության հետեցավ մինչև վերջը: Ասիկա ամենուն համար ընդունելի քաղաքականություն մը չէ, թերև. բայց այն ժամանակի պայմաններուն նայելով պարտադրական քաղաքականություն մըն էր: Հետո, համակերպությունը մեր դարավոր քաղաքականությունն է. Հայոց պատմությունը՝ համակերպության պատմությունն է: Եթե մեզի ժամանակակից ազգերեն շատերը ջնջված են ու մենք տակավին գոյություն ունինք, ասիկա կպարտինք այդ քաղաքականության, և ասոր համար է, որ հայերը կրցած են բազմազան տիրապետությանց տակ ապրիլ: Կաղնիի և եղեգի առածը այս պահուս կհիշեմ ես. կաղնի ըլլալը դուրին և շքեղ բան մըն է, բայց կաղնին կիշրվի, մինչդեռ եղեգը խոնարհելով հանդերձ, դարձյալ կկանգնի. հարկավ պետք եղածն ավելի խոնարհիլ մը կա, որ անտեղի է, սակայն խնդիր է ճշտել՝ թե այս պարագային մեջ եղեգը որքան ծոցեցավ:

(ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊ, Կոստանդնուպոլսի Ազգային ժողովի 1912 թ. դեկտեմբեր 21-ի նիստում արտասանած ճառից)

Հարկ է նաև խոստովանիլ, թե Օրմանյան վերին աստիճանի ընկերային մարդ էր. իր խոսակցությունը հույժ հաճելի էր. կատարյալ կենցաղագետ մ'էր. ընտանեկան անթերի և անստգյուտ կյանք մ'ունեւր և իր անձնական բարոյականն անաղարտ մնաց Պերայի ամենեն եռուզեռ կեդրոնին մեջ բնակելուն հակառակ:

ԲՅՈՒՋԱՆԴ ՔԵԶՅԱՆ

Երկու հանգամանք մղել են մեզ հայ հասարակության առաջ դնել այս գորույկը: Առաջին՝ մեր խորին համոզումն է, որ Ա. էջմիածնի ներկա քայքայված պայմանների համար սրբազան Օրմանյանը, որպես կարող, կրված և վարչագետ անձնավորություն, արժանավորագույն ընտրելին է Կաթողիկոսական Աթոռի համար: Այս համոռոտ կենսագրականով փորձում ենք ծանոթացնել հայ հասարակության նորա բեղմնավոր գործունեության հետ և պարզել այն թյուրիմացությունները, որ տարածել են նորա հակառակորդներն ու թշնամիները հասարակության մեջ:

Երկրորդ՝ մեզ այս գործին մղել է մեր խիղճը, որ անհրաժեշտ է զգացել արդարության ձայնը բարձրացնել այն գոեհիկ և բարբարոսական վարմունքի դեմ, որ Կոս-

տանդնուպոլսո խոժանը յուր պետերով, և ստրկութեան շղթաների մեջ սնված անբարոյական լրագրութիւնը ցույց տվին հրաժարված պատրիարքի դեմ, հավիտենական նշավակութեան արձան կանգնելով իրենց համար: Մերկապարանոց ստութիւնն ու անպատկառ գրպարտութիւնը այդ մարդկանց լավագոյն գեներն էր սեւացնելու և ըստ ամենայնի վարկարեկ անելու մի բարձրաստիճան հոգևորական, որ ծանր օրերի մեջ ցույց տված յուր խելոք գործունեութեան համար, այս ազատութեան օրերին արժանի էր երախտագիտութեան և շնորհակալութեան:

... Մեր խղճի և գիտակցութեան թելադրութեամբ այսպիսի անձնավորութիւններից մեկն է սրբազան Օրմանյան, գիտուն, քաղաքագետ, լեզվագետ, փորձառու, մեր Եկեղեցւոյ անցյալին և ներկա պահանջներին քաջ ծանոթ և գործունեութեան անսահման եռանդով լցված:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
 («Մաղափա աբեղայիսկոպոս Օրմանյան և կաթողիկոսական ընտրութիւն», Թիֆլիս, 1911 թ.)

Այն ժամանակը, որ ես նորին Երանութեան մոտ անցրի, իմ Արևելքում կատարած ճանապարհորդութեան մեջ ամենահետաքրքրական և վաշելքով լի ժամերին են պատկանում: Ես հասկացա իսկույն, որ Արևելքի նշանավոր մարդկանցից մեկի և ուղղութիւն տվող անձի հետ գործ ունեմ:

ՊՐՈՖ. ԳԵԼՅԵՐ

Հայոց Եկեղեցւոյ պատմութիւնը ավելի շահագրգիռ կդառնա անով, որ հեղինակը, Օրմանյան սրբազան, բնիկ արևելցի մըն է, և տասվերկու տարի Կոստանդնուպոլսո Պատրիարքական Մթոռին վրա գտնված է: Հետևաբար ներկա աշխատութիւնը չի նմանիր այն սովորական և աննշանակ հրատարակութեանց, որոնց հեղինակները իրար ընդօրինակելով բան մը մեջտեղ կնետեն: Ասկի զատ հեղինակը ձևին և ոճին զեղեցկութեան հետևող մը չէ, և յուր գիրքը միմիայն սկզբունքներու և եղելութիւններու արձագանքն է: Ընթերցողը պիտի տեսնէ, թէ որչափ ալ ուղղամիտ է, և թէ ինչպէս միայն համոզման վրա հիմնվելով գրած է, այլ և միտքի այնպիսի անկախութեամբ մը, որ զարմանք կպատճառէ եվրոպացի ընթերցողներու, որոնք վարժ չեն այդչափ ազատութեամբ գրող եկեղեցականներու հանդիպիլ:

ՔԵՐՏՐԱՆԴ ԲԱՐԵՅԼ

(Մաղափա Աբեղայիսկոպոս Օրմանյան, «Հայոց Եկեղեցին», Կոստանդնուպոլիս, 1911 թ., «Հառաքարան», էջ 9—10)

... Օրմանյան և Գուրջան, այլապես այնքան աննման իրարու, այդ տեսակետով մեծապես կնմանեին իրարու, հավասարորեն ունենալով այդ երեք առաքինութիւններեն:

... Մեկը, այսպէս, բոլորովին տրամաբանական և թվագիտական տեսութիւններով կազմված և սկոլաստիկ կաղապարի մեջ թափված շոր բայց լայն միտք, մյուսը՝ զեղեցկագիտական ըմբռնումներով շինված և բազմակողմանի հմտութեան պաշարով խորացած իմացականութիւն, մին մեթոդի մարդ, որ սկիզբն մինչև վերջը հին բայց կանոնավոր դասընթացներու միջոցով առած էր իր զարգացումը, մյուսը՝ ներշնչումի մարդ, որ իր նախակրթութիւնը մեկ շրջանի միջոցին քանիցս փոփոխված դպրոցի մը մեջ ստանալիս վերջ՝ մտավորական կատարելագործութեան մը իրական արդունքներուն տիրացեր էր, ինք մինակը գրեթէ և ինքնաշխատութեան ահագին ճիգերով, երկուքն ալ ճանչցած՝ ժուղովորդը, թեև առաջինը քաղաքներու և մայրաքաղաքներու մեջ հաճախ վերեն ու վարչական գիծերու վրայեն ծառայած անոր, մինչ երկրորդը մեծ գյուղի մը մեջ միայն շփման մեջ գտնված էր ամբողջին հետ, բայց երկար կենսակցութեամբ գրեթէ խառնված անոր ներքին իրականութեան հետ և ճարտարապետի՝ բանվորի նվիրումով հավասարապես սպասարկած անոր հոգեկան պետքերուն, երբ իրարու պատահեցան Չարխափանի սեմին վրա, շուտով հասկցան, թէ նախախնամութիւնը իրարու մոտ բերած էր զիրենք՝ մեկով մյուսը լրացնելու և երկուքով ամբողջացված միութեան շնորհիվ կանգնելու համար երկուքն միանգամայն մտասեւեւված գործին մեծութիւնը:

... Կրկնենք, թէ երկուքին գործակցութեան մեջ ամենին ուշագրավ կետը՝ նկարագրով և ոգիով իրարու գրեթէ տրամագծորեն հակոտնյա ըլլալով հանդերձ, իրարու պատշաճիլ կարենալու իրենց իմաստութիւնն էր:

Օրմանյանի լայնսիրտ բարբին և ճկուն բնավորութեան համար ոչինչ ավելի գյուրին էր քան աղիկա: Իր դաստիարակութեան մանկութեան օրերեն ստացված տուրքն էր ան իրեն, զոր հետո ավելի մշակած և փայլեցուցած էր մինչև իր շափահասութեան տարիքը ապրած և գործած այն միջավայրին մեջ, ուր միջնադարյան ըմբռնում մը գիտական նրբութիւններու հասցուցած էր վարվեցողութեան ճարտարութիւնը:

Մարդոց հետ վարվիլ ինքզինքը հարմարեցնելով յուրաքանչյուրին ձգտումին և ճաշակին, վայրկյանին պահանջին համեմատ կերպավորվիլ՝ ամեն մեկ պարագայի

մեջ շահագործվելիք առիթի մը պատեհու-
թյունը ստեղծելով, զրոսանքի շափ հաճելի
և խաղարկութեան մը շափ հեշտ էր իրեն
համար:

Հոգեկան այսպիսի բերումներով շինված
նկարագրի մը համար, Դուրյանի նման
մեծարժեք անձի մը հետ վարվելու գործը
առնվազն վայելք մըն էր ուրեմն, զոր պի-
տի ուզեր անշուշտ արժեքնել ամենեն խելա-
ցի միջոցներով:

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ
(«Յեղիշե պատրիարք Դուրյան»,
Երուսաղեմ, 1932 թ., էջ 155—158)

Այս գործը («Ազգապատում») հասուն-
ցած և հանդարտած Օրմանյանին զուով-
գործոցն է... Ազգային-եկեղեցական պատ-
մութեան մեջ այնքան խոր կերպով դիտած
և ըմբռնած է դեպքերուն տրամաբանական
ծագումն ու հառաջատվութիւնը, որ կար-
ծես իր ձեռքով կշռափե իրողութիւնները
և կխոսի պատմական դեմքերու հետ:

... Օրմանյանի «Ազգապատում»-ը իր
ծրագրով, իր ծավալով, իր նպատակով
բոլորովին նորոգ բան մըն է, և իր «հեղի-
նակը» իրական հեղինակ մըն է, տերը և
դատավորը իր նյութին, և ո՛չ թե պարզա-
պես հավաքող մը կամ հետեւող մը:

Օրմանյան, ինչպես իր նախահիշյալ գոր-
ծերուն, նույնպես իր «Ազգապատում»-ին
մեջ կը յորդորեղանա ո՛չ միայն իր մտավոր կա-
րողութիւններով, այլ նաև իր փորձառու-
թյուններով, իր նկարագրով:

ՔԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ
(Մաղափա արքեպիսկոպոս Օրմանյան,
«Ազգապատում», Գ, Երուսաղեմ, 1927 թ.,
«Նախագիտելիք», էջ է—ԺԳ)

... Միտք մը մշտարթուն: Հիշողութիւն մը
սուր, անվրեպ և համապարփակ՝ թիվերու,
տեղերու, դեպքերու, ժամանակներու և ժա-
մերու իսկ: Այս է խարխիւր այն լիակատար
ինքնավստահութեան և բանալին իր ուժեղ—
և մերթ ինքնաբաւ— անհատականութեան և
ազդեցութեան, որոնցմով կհեղինակավորե
պարտադրորեն իր տիրապետութիւնը մտքե-
րու վրա մանավանդ: Բունապետութիւն պիտի
որակեն այս ինքնեկ հատկութիւնը անոնք,
որոնք շողորթութիւն կալկակալեն կամ
տկարմտութեամբ կամ մեծամտութեամբ:

Ճարտար քաղաքագետ-վարչագետ: Իր
փորձն է առած վատիկանի դիվանական
նրբանցքներուն մեջ հավանաբար, ուր աշ-
խարհի պետական հաշիվները կգտնեն իրենց

արձագանքները: Կճանչնա աշխարհը այն
պրիսմակին ընդմեջն, զոր կկազմեն ընկե-
րային ընկալլալ կարգուսարբերը իրենց
մանվածապատ խաշաձեումներովը: Բնածին
իմացականութիւն մը, լայն բանգիտութեամբ
մը կաղապարված, վարժ այդ պրիսմակին,
կզորացնե իր մեջ քաղաքական մարգարեի
մը ապագայատես աչքը— ոչ, անշուշտ, բա-
ցարձակապես անվրիպելի: Պապական գահը
բարձր չէ իր ձիրքերեն, բայց անհանդուրժող
է այլատարր կշիռներու:

Անխոնջ աշխատող ու երկնող: Երկնող
խոսքի և գործի: Վայրկյանները ունին գին,
զոր չի կրնար անտեսել ու թողուլ, որ անց-
նին առանց իրմե բան մը առնելու: Իր լեզուն
ճարտար ու սահուն, իր գրիչը անսեթեթ ու
տրամաբանական, իր արտահայտութիւններ-
ը անբռնազրոս և աղբերահոս, համոզիչ
ու մտագրավ:

... Այն համակրանքը, զոր կունենան իրեն
հանդեպ, հաճելի հարկադրանք մըն է, որով
կխոնարհիս իր շեշտված ու լեցուն անհատա-
կանութեան առջև: Միտք իր մասնակցութիւ-
նը չի բերեր միշտ այս տարօրինակ, թեև ար-
դար ակնածանքին, որ հաճախ պարտու-
թիւնն է տկարութեանդ... Մարդը շատ բարդ
է իր մեջ. ահա թե ինչո՛ւ փոխնիփոխ կամ
խառնիխուռն համակրանքն ու հակակրանքը
այդ մեծ անձնավորութեան հանդեպ: Իր
հուսկ հրաժեշտով, որ պակաս մը թողուց իր
ետեհն, համակրանքը կտանի հաղթանակը:

Ներույժ կամք մը, անտեղիտալի և ան-
պարտելի իր ճամբու բովանդակ ընթացքին,
որ անփուշ չէ: «Խոհք և խոսք»-ի մեջ շար-
ժանկարված իր պայքարները, միշտ նվա-
ճումներով պսակված, փառավոր ապացույց-
ներն են ադոր: Այդ պայքարները, ոգորում-
ները, ո՛չ կեղծ են, ո՛չ վրայային: Դժվար
է մեղադրել զինք իր սեփական գրչին հա-
մար, որով այդ պատկերն է տված մեզի:
Առանց այդ գրչին, մենք պիտի կորսնցնեինք
ապրված ոչ սովորական կյանքի մը արժե-
քավոր գիծերը, որոնցմով ազդ մը կրնա
հպարտանալ: Հարկ էր ճանչնալ իր տաղան-
դը, զոր կյանքովը արդարացնելի վերջ,
գրչովն ալ իրավունք ըրավ անոր:— Արդյոք
կապտո՞ւմ մը եղած պիտի ըլլար ուրիշի
պատվին, եթե առավելապես այս մարդուն
մեջ գործող Պատրիարքը անմահանար
«Երկաթ» տիտղոսով:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԷՉՈՆԻ
(«Փարոս Հայաստանյայց», 1932 թ.
փետրվար)